

Թիւ 24776  
Փետրուար 18, 1976

Արժանաշնորհ  
Տ. Առնակ Բհնյ. Գասպարեան  
Հովիւ Ս. Քովմաս Եկեղեցւոյ  
Նախագահ ծխական Խորհուրդի  
Թենեֆլայ.

Սիրելի Տէր Առնակ,

Ստացած ենք Փետրուար 12, 1976 թուակիր Ձեր տեղեկագիրը, որով կը  
հաղորդէք թէ Ձեր նախագահութեամբ Փետրուար 1ին զուգարուած համայնքիդ  
ծխական ժողովին մէջ կատարուած է ծխական Խորհուրդի վեց անդամոց ընտ-  
րութիւնը, եւ ներկայացնելով քուէարկութեան արդիւնքը՝ կը խնդրէք  
ընտրուած անձերու վաւերացման պաշտօնագիրը:

Նկատի ունենալով որ Ձեր ծխական ժողովը տեղի ունեցած է Թեմական  
Կանոնադրութեան տրամադրութեան համաձայն, այսու կը վաւերացնենք ծխա-  
կան Խորհուրդի նորընտիր անդամները, ըստ ստորեւ տրուած ցանկին:

Հաճեցէք փութով Առաջնորդարան ղրկել ծխական ժողովի ատենագրութիւ-  
նը, ծխական Խորհուրդի անդամոց անուանացանկը եւ ծխական Խորհուրդի նո-  
րընտիր Գիւանի անդամոց անուանները:

Օրհնելով ծխական Խորհուրդի նոր կազմը, կը մաղթենք Ձեզի եւ Ձեր  
պաշտօնակիցներուն յաջող եւ արդիւնաւոր զործունէութեան տարի մը, ի  
պայծառութիւն Ս. Եկեղեցւոյդ եւ ի հոգեւոր շինութիւն համայնքիդ մեր  
սիրեցեալ ժողովուրդին:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ  
Առաջնորդ

Ճան Ասատուրեան  
Նուպար Ղազարեան  
Շաբէ Շահինեան  
Փօլ Վարպետեան  
Ալպերթ Վիքթորիա  
Արա Մարթին -մէկ տարուան համար-